

կատարվում են քացառապես «հայագիտական-բանասիրական-գրական» նյութեր: Հանդեսի նպատակն է նաև ամրապնդել սփյուռքի ու Մայր հայրենիքի հոգևոր կապերը և ծառայել «հայության գոյատևման սխրալի գործին»:

Նորացված «Բազմավեպի» բերած կարևոր նորություններից մեկն էլ նույնանուն հայագիտական մատենաշարն է, որի առաջին հատորը լույս է տեսել 1972 թ., իսկ վերջին 85-րդը՝ անցյալ տարի, և համընկնում է ամսագրի հրատարակության 150-ամյա տարելիցին: Միջին դիրքի այս գրքերի մեջ, որոնք հիմնականում արտատպություն են հանդեսից, և որոնց հեղինակները գլխավորապես Մխիթարյան վարդապետներն են՝ հ. Պողոս Անանյան, հ. Մեսրոպ Ծանաշյան, հ. Սահակ Ծեմենյան, Կարապետ եպիսկոպոս Ամատունի, հ. Լևոն Ջեքի-յան և ուրիշներ, գիտական շրջանառության մեջ են բերում ու լուծում հայագիտական կարևոր խնդիրներ, բազմաթիվ նոր ու անծանոթ վավերագրեր, գրական-պատմական նյութեր, հայ մատենագրության հուշարձանների բնագրեր՝ հանդերձ հմտալից ուսումնասիրությամբ ու մեկնաբանություններով: Մատենաշարի երախայրիքը հ. Պողոս Անանյանի «Սերտուհի Պատմութեան գրքի մասին քանի մը լուսաբանություններ» աշխատությունն է: Կարևոր են նաև նրա մյուս գրքերը՝ տպված դարձյալ «Բազմավեպի» մատենաշարով, որոնք նվիրված են Լուսավորչի քարոզությունից առաջ Հայաստանում եղած քրիստոնեության հետքերին, 5-րդ և 6-րդ դդ. հայոց եկեղեցու, Դավիթ Տարոնացու և Բարսեղ Կեսարացուց կատարած նրա թարգմանությանը: Հիշենք նաև ավելի վաղ «Բազմավեպից» արտատպված նույն գիտնականի ուսումնասիրությունը Մեսրոպ Մաշտոցի մասին, որն իր խոր քննություններով, նուրբ վերլուծություններով և բնագրագիտական նկատողություններով մեծապես օգնում է ճիշտ հասկանալու Կորյունի և Ագաթանգեղոսի բնագրերի փոխհարաբերությունները և գրքերի գյուտի հետ կապված վիճարկույց խնդիրները:

Մատենաշարի մյուս գրքերից արժե հիշել երկու բնագրերի՝ Դավիթ Բեկի պատմության գույգ պատումների ու խմբագրության և Արքաբան Երևանցու Պատմության նոր քննական հրատարակությունները՝ կարևոր մեկնաբանություններով ու հավելվածներով (հ. Սամուել Արամյան և հ. Սահակ Ծեմենյան), վերջապես Ծեմենյանի ուշագրավ երկասիրությունները՝ **նվիրված Ներսես Սարգիսյանի ուղևորությանը դեպի Մեծ ու Փոքր Հայք, Մ. Չամչյանի «Հայոց պատմությունը» և Ղ. Ալիշանի կյանքին ու գործունեությանը Փարիզի Մուրադյան վարժարանի տեսուչ եղած տարիներին:**

Ծավ պիտի հայտնել միայն, որ մայր հայրենիքում և՛ «Բազմավեպ» հանդեսը, և՛ նրա հայագիտական հավելվածը լայն հետաքրքրասերների համար դժվարագույն գրքեր են, ու միայն նեղ մասնագետներն են կարողանում ծանոթանալ դրանցում ամփոփված մեծարժեք նյութերին:

Ավարտե՛նք, «Բազմավեպը» բոլորեց իր 150 տարին: Հին օրերի նման, հիմա այն ամսեամիս լույս չի տեսնում: Նրա ընթերցողները սպասվել են հայության հին հայրենիքում: Ամսագիրը չի ստացվում նաև Կովկասի և Ռուսաստանի հայաշատ քաղաքներում, մինչ անցյալում «Բազմավեպն» այդտեղ բազմաթիվ բաժանորդներ ուներ: Այնուհանդերձ, Վենետիկի Մխիթարյանների կարող անդամները չեն խնայում ուժ և եռանդ՝ միշտ թե՛ ու բորբոքում արհեստը մեր հոգևոր կյանքի ու մտածության այս հնոցը:

Պ. Լ. ԼՆԿՈՒՅԱՆ

**«ԲԱԶՄԱՎԵՊ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ,
ԹԻՎ 1—4, ՎԵՆԵՏԻԿ, 1992 թ., 362 էջ**

Հեռավոր Ադրիատիկի ափերին, Վենետիկում, լույս տեսավ հայ լրագրության և հրատարակչության նահապետի՝ «Բազմավեպ» հանդեսի 150-րդ հատորը: Հիմնված լինելով դարուկես առաջ՝ 1848ին, Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան հայրերից Գաբրիել Այվազովսկու կողմից, այն արդեն երկար տարիներ անխափան շարունակում է իր գիտական երթը՝ դաստիարակելով և կրթելով ընթերցողների նորանոր սերունդներ: Սկզբնավորվելով որպես «Օրագիր բնական, տնտեսական և բանասիրական գիտելեաց», այն սկզբից էեթ իր առջև նպատակ էր դրել բոլոր միջոցներով մեր «ազգին լուսաորության ու յառաջադիմության համար աշխատի», իր մտավոր շահաբերությունն ունենալ «մեր ուսումնասեր ազգայնոց»: Անցնող տարիները և հանդեսի՝ առանց քացառության բոլոր համարները լավագույնս վկայում են այն մասին, որ նա կարողացավ ի կատար ածել իր առջև դրված կարևորագույն խնդիրները, և դժվար է այսօր չափել նրա բերած նպաստը մեր ազգային գիտակցությանն ու իմացականին:

Այդ տարիների ընթացքում «Բազմավեպը» մերթ էղել է շարաթաթերթ, մերթ հրատա-

րակվել որպէս ամսաթերթ, այս հաջորդաբար դարձել է երկամսյա ու եռամսյա՝ նայած թե ինչպէս են դասավորվել հանգամանքները: Անկախ արտաքին-ծավալային փոփոխություններին, անխախտ է մնացել նրա պարունակությունը՝ միշտ հարուստ ու բովանդակալից: Բացառություն չէ նաև տաքցած վերջին՝ ԾԾ հատորը, որն իր մեջ ամփոփում է 1992ին լույս տեսած բոլոր 4 համարները: Այսօր տարեկան հուլյան թիվ է թողարկվում, որոնք միավորվում են մեկ ծավալուն հատորի մեջ:

Տարբեր ժամանակներում, հաշվի առնելով հասարակության տարբեր շերտերի հոգևոր պահանջները և նախասիրությունները, անշուշտ, փոփոխություն է կրել տպագրվող նյութերի բովանդակային ցանկը: Այսօր, օրինակ, այստեղ այնև չենք հանդիպում բնական և տնտեսական մարզերին վերաբերող այնպիսի հոդվածների ու հանրագիտարանային քննաթի նյութերի, որոնք կային, ասենք, հանդեսի սկզբնական շրջանի համարներում: Բնականաբար, հաշվի է առնվում թե՛ սփյուռքում, թե՛ հայրենիքում լույս տեսնող բազմաթիվ ու բազմազան թերթերի ու պարբերականների առկայությունը: Դա իր արտահայտությունն է գտել նաև հանդեսի խորագրում, որն արդեն կոչվում է «հայագիտական-բանասիրական-գրական հանդես»: Այսօր դժվար է «հազմավէպի» կողքին դնել հայկական մեկ այլ թերթ, գիտական հանդես կամ պարբերական, որ նրա հետ մրցի ոչ միայն իր երկարակեցությանը, այլև որպէսզայն ուղղությանն ու սկզբունքներին հավասարի մնալու և դրանք շարունակելու ու հետագա զարգացման հասցնելու հետևողականությամբ:

Լինելով Սուրբ Ղազարի Մխիթարյան միաբանության պաշտոնաթերթը, այս անգամ այն բացվում է Ներսես Տեր-Ներսեսյանի եպիսկոպոսական ձեռնադրության առթիվ հայր Ռուփայել Անտոնյանի գրած «Մեր խօսք»-ով, որում պատմվում է կաթոլիկ եկեղեցու պատմության աննախընթաց մի երևույթի մասին, երբ 1992 թ. Երեւմերի 17-ին Հռոմի պապը Ս. Դետրոսի Մայր տաճարում առաջին անգամ ձեռնադրեց հայ եպիսկոպոս: Նման պատվի է արժանացել Մխիթարյան նախկին ընդհանուր մեծավոր, հայագիտական շրջանակներին քաջածանոթ հմուտ գիտնական և Մխիթարյան նոր սերնդի անխոնջ դաստիարակ հայր Ներսես Տեր-Ներսեսյանը, որը Սրբազան քահանայապետի կողմից նշանակվել է «Առաջնորդ վիճակի կաթողիկե հայոց Արևելեան Երուսալի և Հայաստանի»: Ուշագրավ է, որ այդ նշանակմանը նախորդել էր Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի 4-ը դեկտեմբերի 1990 թվակիր նամակը՝ ուղղված Մխիթարյան միաբանությանը, որում նա Վեներաբլի մխիթարյաններին հրավիրում է գալ Հայաստան, ստանձնել հայ կաթողիկեների հովվական հոգը, որով կիրականանար նաև Հայաստանում «Մխիթարյան անկյուն» ունենալու նրանց երազանքը: «Մեր ջերմ ցանկությունն է, — գրում է Հայոց վեհախառը, — որ Հայաստանի հայ կաթողիկե համայնքը օրինակորապես և մշտապես կապված մնա Ս. Ղազարի Մխիթարյան ուխտին և հետագային հոգևոր հովիվները լինեն ձեր միաբանության շարքերին»: Այս առումով ոգևորիչ է ընթերցել նաև Հայ առաքելական եկեղեցու զույգ կաթողիկոսների՝ Վազգեն Ա-ի և Գարեգին Բ-ի ջնորհավորական հեռագրերը, որոնցով նրանք ողջունում են հայ կաթողիկե եկեղեցու մուտքը Հայաստան:

Եկեղեցապատմական այս կարևոր լուրին հաջորդող հիմնական բաժնի ուսումնասիրությունները պատկանում են հայագիտության տարբեր շրջանների ու բնագավառների, վերաբերում են ամենաբազմազան հարցերի ու խնդիրների՝ նվիրված հայ-հոռմեական առնչությունների և հայ կաթողիկե պատրիարքության ծագման պատմությանը, Հայոց կաթողիկոս Հակոբ Զուղայեցու գահակալության տարիներին, Մովսես Խորենացու հիմնադրական ժառանգությանը և այլն:

2. Գողոս Անանյանի «Գրիգորիս Վկայաւեր և հայ-հոռմեական հարաբերությունները» հոդվածը ի հակակշիռ գոյություն ունեցող այն ընդհանուր կարծիքի, որի համաձայն հայ-հոռմեական կրճական հարաբերությունները սկիզբ են առել խաչակիրների՝ դեպի Արևելք գալով, կոչված է հաստատելու այն միտքը, թե ընդհակառակը, դրանք «սկսած են հայոց՝ դեպի Արևելուտք գալով», որ կկանխե խաչակիրներու գալուստը: Այս եզրահանգման համար նա գիտականորեն համարում է հայ և օտար պատմական աղբյուրների, ի մասնավորի Մարտեոս Ռոմայեցու «Ժամանակագրութեան», Կիրակոս Գանձակեցու «Համարտօս պատմութեան», Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատմի» տվյալներն ու վկայությունները: Ըստ դրանց Հայոց Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը իր գահակալության օրոք այցելել է Հռոմ: Այդ ճամփորդության նպատակը, ինչպէս Ներսես Ծնորհալին է գրում, եղել է այնտեղ գաղթած հայերին այցելելը և զլխավոր առաքյալների դամբանին ուխտ գնալը: Քըն-նության հիմնական առարկա է դարձվում Գրիգոր է Պապի 8-ը հունիսի 1080 թվակիր մի նամակը՝ ուղղված Գրիգոր Սինեաղայի արքեպիսկոպոսին: Վերջինս, ըստ հոդվածագրի, նույն ինքը Գրիգորիս Վկայասեր Հայոց հայրապետն է՝ Գրիգոր Մաքսիմորոս Պահլավունու որդի Վահրամը, որ կաթողիկոս ընտրվեց 1065 թ. Մալաթիայի արևելքում գտնվող և Գագիկ Բագրատունու նստավայրը հանդիսացող Ծամնդավ բաղաբուն՝ ստանալով «Գրիգոր Մամնդակցի» տիտղոսը: Մեյն Ամենայն, որի հայերեն թարգմանությունն առաջին անգամ տըր-

վում է հավարտ այս հողավածի, փաստորեն Գրիգոր Պապի՝ Արևելքի քրիստոնյաների հետ հարաբերություն մշակելու համապարփակ ծրագրի մի արտահայտությունն էր միայն և դերակազմ իսկ ունի պատմական կարևոր նշանակություն:

Կարևորագույն էպ. Ամատունու «Յակոբ Դ. Ջուրլյեցի. կաթողիկոս Էջմիածնի (1660—1680)» հողավածը սկիզբն է այն հողավածաշարի, որ միջրված է Հայոց այս կաթողիկոսի կյանքին և բեղուն շինարարական գործունեությանը: Առավել հետաքրքրականն այստեղ, ըստ մեզ, այն էջերն են, որտեղ ուսումնասիրության հեղինակը թարգմանաբար մեջ է բերել հատվածներ ֆրանսիացի միսիոներ Հրանչոս Փալլիվի օրագրից, բրում ականատեսի աչքերով պատմվում է 1662-ի ս. Էջմիածնի, նրա վանքի և վերջինիս սպասավորների կյանքի ու կենցաղի մանրամասնությունների մասին:

Վենետիկի Մխիթարյան վարդապետների՝ Ավետիքյանների, Բագրատունիների, Ղազիկյանների, Փեչիկյանների և շատ այլոց լավագույն ավանդույթները շարունակողների մեջ է հայր Մահկ Մեմենյանը: Միայն քննվող համարներում նա ունի 3 շահեկան հողված: Դրանցից առաջինը, որ կոչվում է «Պողոս Պիրոմալի. Արքեպիսկոպոս Նախիջևանի», շարունակությունն է մախորդ համարներում սկսած հողվածաշարի, բրում նա ամենայն բնականորեն և հանգամանորեն հյուսում է Նախիջևանի վանականության պատմությունը: Դեպքերը սկսվում են 1648 թ. փետրվարի 7-ից, երբ որպես Հոռմի Սուրբ աթոռի ներկայացուցիչ Էջմիածնի է մուտք գործում նշանավոր գիտնական և լատին միսիոներ Պողոս Պիրոմալին՝ բանակցելու Փիլիպպոս կաթողիկոսի հետ Հայոց և Հոռմեական եկեղեցիների միությունը իրագործելու խնդիրների շուրջ: Հուսալքված դրանց անհաջող ընթացքից, Պիրոմալին նամակներ է հղում Հոռմ՝ մասնավորապես առաջարկելով Իտալիայում ճնշում բանեցնել հայ վանատականների վրա՝ ընդհուպ մինչև երկրից նրանց արտաքսելը: Սա հետաքրքիր մանրամասն է հատկապես այն իմաստով, որ Հոռմը ոչ մի միջոցի առջև կանգ չէր առնում իր ծրագրերն իրականացնելիս: Քաղելով մանրամասներ Սուրբ ժողովին առաջարկած նամակներից, բազմաթիվ, բազմաթիվ ազգային պատմական հիվանդ և Հոռմի ժողովրդական միտքի արձանագործությունները՝ հողվածագիր կարևոր տեղեկություններ է հաղորդում Պիրոմալի և Նախիջևանի կրոնականների ու աշխարհականների անհաջողության ու հակասությունների մասին, ցույց տալիս, որ չնայած նրա մտավոր գործող պաշարներից և պատրաստված լինելու հանգամանքին, իր անհանդուրժող բնավորության և քիթոն մեղադրարի պատճառով նա ավելի ևս ցրեց տեղի վանականներին և իր մյուս նակորդների ու հողորդների նման չհարմարվելով տեղի կացությանը, հեռացավ Հայաստանից:

Մահկ Մեմենյանը իր հեղինակած երկրորդ հողվածով մեզ ներկայացնում է մի անձի՝ Հովհաննես քահանա Մկրյան, որ ապրել ու գործել է Պոլսում (1831—1899)՝ ուրույն տեղ գրադեցնելով ժամանակի հայոց կյանքում: Նա մեկն է մեր այն ազգայիններից, ովքեր իրենց կարողությունների չափով մասատել են Ղևոնդ Ալիշանի աշխատություններին իրա աշխարհ գալուս: Իր հրատարակելի հատորների համար մյուս հավաքելու անհրաժեշտությունից մղված մեծ հայագետը հաճախ էր հաղորդակցության մեջ մտնում իր հայրենակիցների հետ՝ խնդրելով նրանց օժանդակությունը: Սա ընդամենը մի էջ է այդ հաղորդակցության պատմությունից, որի հենքը կազմում են իրար ուղարկած նամակները: Հողվածը հենց այդպես էլ կոչվում է՝ «Յովհաննես քի. Մկրեանի նամակները առ Հ. Ղևոնդ Ալիշան»: Այն ուղեկցվում է հիշյալ քահանայի թվով 8 նամակների տպագրությանը և դրանց ծանոթագրություններով: Բացի դրանից «Տեղագրությունը Հայաստանի» խորագրի ներքո այս անգամ նա «Բազմավելյը» տասնյակ էջեր է հատկացրել Ղևոնդ Ալիշանի «Ուտի» աշխատության տպագրմանը, որի «Գարդման», «Գանձակ» և այլ գլուխները մեծ հետաքրքրությամբ են ընթերցվում հատկապես այս օրերին՝ պայմանավորված քաղաքական հանգամանքներով:

Մահկ Մեմենյանի «Հ. Միքայել Չամչեանի «Պատմություն Հայոց»-ի արձագանքը» հողվածը շահեկան է Մխիթարյան այս պատմահոր նշանավոր երկամիտության հանդեպ ժամանակի հայ հասարակության կրոնական և աշխարհիկ տարբեր շերտերի ցուցաբերած վերաբերմունքի ինտերյուսն տեսանկյունից: Ինչպես երևում է հողվածից, ժամանակին աղմուկ տեղիք է տվել տրամագծորեն հակառակ կարծիքների՝ թորթոքելով հին ու նոր վեճերը: Առկա տարակարծությունների հիմքում ընկած են դեպի Մխիթար Արքաճոր և նրա հիմնած միաբանության որդեգրած գլխավոր սկզբունքը եղած տարբեր մտտեցումները: Ըստ այդ սրբազան ավանդի «Կրօնքը պետք չէ զոհել ազգին և ոչ ազգը՝ կրօնքին» և որ Հոռմի գահին հավատարիմ մնալը, չի նշանակում ուրանալ Հայաստանեայց եկեղեցին: Սա հաճախ չհասկացվեց ոչ Հոռմի, ոչ Էջմիածնի կողմից: Դա էլ հիմնականում պատճառ դարձավ Չամչեանի «Պատմություն» հանդեպ ունեցած երկակի վերաբերմունքի: Այս ամենին ընթերցողն ի մտու ծանոթանում է հեղինակի ջանքերով տարբեր դիվաններից հանված փաստաթղթերի միջոցով: Այսպես, լատին կղերը և նրանց հայ հետևորդները միացյալ ամբաստանության «թուղթ» են ուղարկում Ս. ժողով, որում նկատել են տալիս, թե հայր Միքայելը իր պատմագրքում «միշտ ջատագովել գեղայս և վատաբանել զլատինացիս» (էջ 151): Ներ-

կայացնելով Հայ առաքելական եկեղեցու հետևորդների տեսակետը՝ պարզվում է, որ այս հարցում միասնություն չկա նրանք շարքերում: Եթե մի կողմից Միք. Չամչյանի «Հայրց պատմութիւնը» երախտագիտությանը ընդունվեց ուսուցիչների ու գրականությանը զբաղվող դասի կողմից, ապա եղան նաև, մեղը առած, այն շողջունողներ: Նրանք գնահատելով հանդերձ արված հսկա աշխատանքը, զգուշացան այն անվերապահ գնահատելուց: Ավելին. ապագա կաթողիկոս Հովսեփ արք. Արղությանն, օրինակ, արգելեց Պատմության ընթերցումը՝ հայտարարելով, թե «Նենգամիտ Չամչեան այն մուրրեցուցանել գիտէ զՀայաստանեայցս յուսարոշադաւան եկեղեցի» (էջ 159):

Հավանաբար քչերը գիտեն, որ հայ կաթողիկ հավատացյալները դեռ 18-րդ դարասկզբին իբր «հերետիկոսական աղանդներից» անջատվելու, հայ եկեղեցուց և «հերետիկոս» պատրիարքից, այսինքն՝ Հայոց կաթողիկոսից անկախ գործելու և իրենց հոգևոր առաջնորդն ունենալու շահախնդրությամբ, ի գին ամեն զոհողության բազում փորձեր են արել Հռոմում հաստատել տալու հայ կաթողիկների պատրիարք-կաթողիկոս: Հայր Մարտիրոս Ապամյանի «Հայ կաթողիկէ պատրիարքութեան ծագումը» ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ դա նրանց ի վերջո հաջողվում է: 1740 թ. Հայեայի հայ կաթողիկ կղերը, ոչ առանց լատին միսիոներների օգնության, Աբրահամ Արծիվյանին նախ ձեռնադրում են իբր «կաթողիկոս մեր և բոլոր հայ կաթողիկէներուն», ապա հաջորդ տարի խնդրագիր ներկայացնում Հռոմ՝ օրինավորելու կատարած ընտրությունը: Այն վավերացնելով 1742ին, ինչպես ուսումնասիրության հեղինակն է գրում, «Հռոմ զուցէ կմտածէր լուծած ըլլալ ոչ կաթողիկէ կաթողիկոսութիւնը, որու հետևանքով հայերը պիտի ուղղվէին մէկ հովիտի ներքև՝ յաճճին Աբրահամ Արծիվեանի» (էջ 2169): Պատմության հետագա ընթացքն, իհարկե, հակառակը ցույց տվեց: Այս առումով թերևս կարևոր էր իմանալ այս հարցում Վենետիկի Մխիթարյան միաբանության դիրքորոշումը: Պարզվում է, որ դեռ 1714ին Պոլսի լատին պատրիարքական փոխանորդ Կալլանիի ձեռնարկած անջատական հերթական փորձի ժամանակ անձամբ ինքը՝ Մխիթար Սեբաստացին, Հունաստանի Մեթոն քաղաքից հրահանգում է Պոլսում գտնվող իր աշակերտներին՝ բացարձակ կերպով հեռու մնալ սկսված շարժումից:

Հարկ է ասել, որ հիշյալ թեմայով նույն հեղինակի վերջին՝ թվով 8-րդ հոդվածն էր սա, որի սկզբնամասերը հրատարակվել էին հանդեսի նախորդ համարներում: Սա ընդունված կարգ է «հազմավէպի» երկարամյա կենսագրության մեջ, երբ միմյանց հաջորդող համարներում շարունակաբար տպագրվում են նույն թեմայի նրբանոթ զարգացումները՝ նպաստելով մեկ ամբողջական երկի տեղեկմանը: Անկարևոր չէ նշել նաև մեկ ուրիշ հանգամանք, որով ևս հատկորոշվում է հանդեսի քննվող տարեհամարը: Դա ոչ միայն հայերեն հոդվածների իտալերեն հսկիին ամփոփումներն են, այլև նույն լեզվով մեծաչափ հոդվածների հրատարակումը՝ նախատեսված օտար ընթերցողի համար: Այդ կերպ վերջինիս հնարավորություն է ընձեռվում ծանոթանալու հայոց պատմության և եկեղեցական գրականությանն առանձին հետաքրքրական դրվագների: Բացի Մարտիրոս Ապամյանի վերոհիշյալ հոդվածից իտալերենով են շարադրված նաև Թամար Տսանպետյանի «Հայկական ճառ մը Աստուածամոր վերափոխման և պատկերին մասին» և Գրիգորիա Սերենյանի «Սեպերեան և Յուլիանեան հետքեր հայ եկեղեցական գրականության մեջ» ծավալուն հոդվածները:

Հավատարիմ Մխիթարյան գիտնական վարդապետներից զատ նաև Հայաստանի ու սփյուռքի հեղինակների գրվածքներին տեղ տալու վաղեմի ավանդույթին, «հազմավէպի» 1992-ի թիվը տպագրել է երածշտության պատմաբան Աննա Արևշատյանի (Երևան) «Մովսես Խորենացու հիմնեղբայրական ծառանդութիւնը» հոդվածը և փարիզաբնակ մտավորականներ, բանաստեղծ Զուլալ Գազանճյանի և գրող-փիլիսոփա Գրիգոր Պըլտյանի երկասիրությունները: Վերջինիս Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւնը» հետաքրքրել է հիմնականում գրության և ծագման միջև եղած կապը բացահայտելու և դրանց հարաբերություններն ու առնչությունները պարզելու տեսանկյունից, իսկ Զուլալ Գազանճյանը վերլուծության ևս, ինչպես ինքն է բնութագրում՝ «գրական մերձեցման» նյութ է ընտրել մեր միջնադարյան բանաստեղծության ասկալածանող դեմքերից մեկի՝ Վարդան Անեղու առ այսօր «չքսկուած» քերթվածներից մեկը՝ «Ներբողը», որի բնագիրը իր կատարած արևմտահայ թարգմանությամբ ևս ներկայացվում է գրասեր ընթերցողին:

Բազմազան և հարուստ է 1992ի «հազմավէպի» նաև երկրորդ՝ «Հաղորդումներ, նշումներ, գրախոսականներ» բաժինը, որտեղ Հայկ Տեր-Ղևոնդյանն ավարտում է «Ոսկերչությունը Կիլիկյան Հայաստանում ԺԳ—ԺԴ դարերում» պատմերազարդ շարքը, իսկ Զարեն Պտուկյանն անչափ օգտակար տվյալներ է հաղորդում իր անձնական և ամերիկյան գրադարաններում պահվող հայ հնատիպ գրքերի մասին: Լևոն Մինասյանի (Նոր Զուղա), Վարդան Մաթևոսյանի (Բուենոս Այրես) և ճարտարապետ Արա Զարյանի (Երևան) գրախոսությունները համապատասխանաբար վերաբերում են 1990-ին Հայաստանի ԳԱ հրատարակչությանը լույս ընծայած Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությանը, ավելի վաղ՝ 1987 թ. Երևանում հրատարակված Ռուբեն Մանասերյանի «Տիգրան Մեծ. Հա-198

յաստանի պայքարը Հոսմի և Պարթևստանի դեմ՝ մեծագործյանը և «Հայ ճարտարապետության վավերագրեր» մատենաշարի թվով 21-րդ՝ «Նոր Ջուղա» հատորին: Ինչպես միշտ, հանդեսն ավարտվում է «Ծնողականությունը ստացած ենք»՝ Վեներիկի Մայրավանքի գրադարան մուտք գործած գրքերի և «Բազմավեպի» հայագիտական մատենաշարի ցանկերի տպագրությամբ:

«Բազմավեպի» 150-րդ տարեկան հատորի թելուզև հպանցիկ քննությունը պարզում է անհերքելի այն իրողությունը, որ չնայած հայ հոգևոր մշակույթի հարստացմանը բերած իր անուրանալի նպաստին և երկարամյա գիտական վաստակին, այն այսօր էլ շարունակում է մնալ հայագիտության առաջապահ դիրքերում: Նկատի ունենալով այս, ինչպես և մերօրյա ընթերցողներից շատ-շատերի համար մատենագիտական հազվագյուտ նմուշ լինելու հանգամանքը, նաև ի նշանավորումն գիտական հանդեսի լույսընծայման 150-ամյակի՝ անչափ օգտակար գործ կլիներ վերատպագրել այն եթե ոչ ամբողջությամբ, ապա գոնե տարիների նրա ստատ հունձքի ընտրանին՝ մի քանի հատորներով:

Լ. Ե. ԼԱՃԻԿՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՎԱՌԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՑ (1900—1920 թթ.)

Նախախորհրդային շրջանում հայ գավառական մամուլի և գրաստության նկատելի օջախներ են եղել Աջարիայի և Աբխազիայի կենտրոններ Բաթումը և Սուխումը: Սևծովյան ավազանի հայաշատ այդ քաղաքներում ևս մեր դարասկզբին հիմնադրվում են հայկական տպարաններ, որոնցում տպագրվում են հայերեն գրքեր, թերթեր և այլ նյութեր:

Բաթումում նախախորհրդային շրջանում գործել է հայկական երկու տպարան, որոնցից առաջինը հիմնադրվել է երկու դարերի սահմանագծում Ն. Գուրոկյանի կողմից: Վկայություններ կան, որ այդ տպարանում, 1901—04 թթ., մի շարք գրքերի հետ միասին¹, հրատարակվել է նաև հայերեն մի թերթ, որը մինչև այժմ մնում է անհայտ, նրանից չի պահպանվել ոչ մի օրինակ²: Ըստ մեզ հասած տեղեկությունների³, այն լուսաբանել է Բաթումի նավահանգստային բորսայում աշխատող հայ գաղթական մշակների կյանքը, տպագրվել են լուրեր, թղթակցություններ ու առանձին հոդվածներ Արևմտյան Հայաստանի անցուղար-

ձից, Սև ծովի կովկասյան ափերի իրադարձություններից, ինչպես նաև արտատպություններ են կատարվել տարբեր թերթերի էջերից:

Մեկ այլ թերթ տպագրվել է այդ տպարանում, թե՛ ոչ, մեզ հայտնի չէ: Միայն գիտենք, որ Ն. Գուրոկյանի տպարանը փակվել է 1905—07 թթ. ռուսական առաջին հեղափոխության պարտությունից հետո, ստոլիպինյան ռեֆորմների շրջանում:

Բաթումի երկրորդ հայկական տպարանը հիմնադրվել է 1917 թ. մի խումբ հայ բուլշևիկների կողմից: Այդ տպարանում, Հ. Հակոբյանի, Ս. Խանոյանի, Ա. Սարուխանյանի, Ս. Ջուրաբյանի և Գ. Գրիգորյանի նախաձեռնությամբ, 1917—18 թթ. տպագրվում է «Բանվոր և Զինվոր» հայերեն թերթը: Զ. Տ. Գեգեշիձեն իր՝ Վրաստանի բուլշևիկյան կազմակերպությունների գաղտնի տպարանների պատմությանը նվիրված գրքում գրում է. «1917 թվականին, այլ բուլշևիկյան թերթերի հետ միասին, Բաթումում լույս է տեսնում նաև բուլշևիկյան «Բանվոր և Զինվոր» հայերեն թերթը⁴, որը, սակայն, մեզ չի հասել: Նույն հեղինակի վկայությամբ, այդ տարիներին բուլշևիկյան թերթերը, որոնք տարածվում էին գաղտնի կերպով, ընկնելով ոստիկանության ձեռքը, ամբողջական տպաքանակներով ոչըն-

¹ Տե՛ս Թեղիկ, Տիպ ու Տառ, Կ. Պոլիս, 1912, էջ 185:

² Մեր դարասկզբին Բաթումում լույս տեսած այս թերթի մասին ոչ մի հիշատակություն չկա մեր մատենագիտական հրատարակություններում:

³ Այս թերթի մասին տվյալներ մենք քաղել ենք աջարահայ մշակույթային կյանքի քաջագիտակ, «Էջեր Բաթումի հայ թատրոնի պատմությունից» (Երևան, 1961) մեծագրության և այլ արժեքավոր գրքերի հեղինակ, թատերագետ ու բանաստեղծ Գևորգ Ղարիբյանի (1927—1992) անձնական արխիվից:

⁴ Զ. Տ. Գեգեշիձե, Վրաստանի բուլշևիկյան կազմակերպությունների անկեղծ տպարանները (1900—1920), վրացերեն, «Յրիկիսի, 1968, էջ 242: Այդ թերթի մասին տե՛ս նաև՝ «Очерки истории коммунистической партии Грузии», в 3-х частях (1883 - 1981). часть первая: «В борьбе за победу социалистической революции (1883 - 1921)». Тбилиси. 1982. էջ 283: